



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

23 հուլիսի 2013 թ. № 121 - Ա/1
ք. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ»
ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ, ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ՀԱՅՏԻ ՁԵՎԸ ԵՎ
ՀԱՅՏԻՆ ԿԻՑ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ
ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թ. հուլիսի 12-ի № 825-Ն որոշման № 1 հավելվածի 11-րդ կետի 4-րդ ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 19-ի № 8 որոշումը՝ հրամայում եմ.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կանոնակարգը՝ համաձայն № 1 հավելվածի:
2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմկոմիտեի կազմը՝ համաձայն № 2 հավելվածի:
3. Հաստատել «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի հայտի ձևը՝ համաձայն № 3 հավելվածի:
4. Հաստատել «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ համաձայն № 4 հավելվածի:

(Handwritten signature)



ՅՈՒ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԿԱ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ» ՄՐՑՈՒՅԹԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 «Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք»-ը (այսուհետ՝ Մայրաքաղաք) կարգավիճակ է, որը մրցույթի արդյունքում (այսուհետ՝ Մրցույթ) շնորհվում է քաղաքին՝ մեկ տարի ժամկետով: Մայրաքաղաքը հնարավորություն է ստանում այդ մեկ տարվա ընթացքում իրականացնելու երիտասարդների սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային, մարզական ակտիվությանը նպաստող ծրագրեր:

1.2 Մրցույթը նպաստում է նորարարական ծրագրերի ստեղծմանը և իրագործմանը՝ կապված Հայաստանի Հանրապետության քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցության հետ:

1.3 Մայրաքաղաքի կարգավիճակը քաղաքի երիտասարդական կազմակերպությունների համար հնարավորություններ է ստեղծում մասնակցելու հանրապետական մակարդակով որոշումների ընդունմանը, ձեռք բերելու նոր գիտելիքներ, հմտություններ, գործընկերներ, զարգացնելու միջազգային համագործակցությունը երիտասարդության ոլորտում:

2. Մրցույթի հիմնադիրները և կազմակերպիչները

2.1 Մրցույթի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2.2 Մրցույթի կազմակերպիչն է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

3. Մասնակիցները

3.1 Մրցույթի մասնակիցներն են (այսուհետ՝ Մասնակիցներ) Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող և քաղաքի կարգավիճակ ունեցող համայնքները: Մրցութային հայտը (այսուհետ՝ հայտ) ներկայացվում է քաղաքապետարանի կողմից քաղաքում երիտասարդական ոլորտում գործունեություն ծավալող առնվազն երկու հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ: Յուրաքանչյուր մասնակից կարող է ներկայացնել մեկից ոչ ավել հայտ: Նույն քաղաքը չի կարող երկու անգամ անընդմեջ ճանաչվել Մայրաքաղաք:

4. Մրցույթի նպատակները

4.1 Մրցույթի նպատակներն են՝

- ա) խթանել Հայաստանի Հանրապետության մարզերի համաչափ զարգացումը.
- բ) զարգացնել երիտասարդական նախաձեռնողականության, երիտասարդական քաղաքականության ոլորտում քաղաքների միջև բարեխիղճ և գործընկերային հարաբերությունները՝ ինչպես տեղական և հանրապետական, այնպես էլ միջազգային մակարդակում.
- գ) խրախուսել Հայաստանի Հանրապետության քաղաքային իշխանություններին՝ տեղական մակարդակում մշակել երիտասարդական քաղաքականության իրականացման արդիական և արդյունավետ մոդել.
- դ) նպաստել մարզերում երիտասարդական կազմակերպությունների և ենթակառուցվածքների զարգացմանը:

5. Մրցույթի կազմկոմիտեն և փորձագիտական հանձնաժողովը

5.1 Մրցույթի անցկացման համար մեկ տարի ժամկետով ստեղծվում են մրցույթի կազմկոմիտե (այսուհետ՝ Կազմկոմիտե) և փորձագիտական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

5.2 Կազմկոմիտեն բաղկացած է 10 անդամից, որոնցից 5-ը ներկայացնում են պետական մարմինները, իսկ 5-ը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհուրդը: Կազմկոմիտեն հաստատում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարը: Կազմկոմիտեի նախագահն է Նախարարության երիտասարդական քաղաքականության ոլորտը համակարգող նախարարի տեղակալը:

5.3 Կազմկոմիտեն պատասխանատվություն է կրում Մրցույթի բնականոն կազմակերպման և թափանցիկության ապահովման համար:

5.4 Հանձնաժողովը կազմված է 10 փորձագետներից, որոնք ընտրվում են Կազմկոմիտեի կողմից՝ համաձայն ներկայացված հայտերի: Փորձագետը չի կարող Կազմկոմիտեի անդամ համարվել:

5.5 Կազմկոմիտեն սահմանում է մրցույթի մասնակցելու համար փաստաթղթերի ընդունման և մրցույթի արդյունքների հայտարարման ժամկետը և մշակում է հայտերի գնահատման համակարգը՝ սույն Կանոնակարգում ամրագրված դրույթներին համապատասխան:

5.6 Հանձնաժողովը, առաջնորդվելով սույն Կանոնակարգով և Կազմկոմիտեի կողմից 7-րդ կետում նշված փաստաթղթերով, իրականացնում է մրցութային հայտերի փորձագիտական գնահատումը:

6. Մրցույթի անցկացման կարգը

6.1 Մրցույթն անցկացվում է ամեն տարի:

6.2 Մրցույթի անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը (մասնակիցների նկատմամբ պահանջներ, Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերի ընդունման ժամկետներ և կարգ, հաղթողների ընտրության չափանիշներ, Մրցույթի արդյունքների հայտարարման կարգ և ժամկետ, ինչպես նաև՝ հայտի ձև) Կազմկոմիտեի կողմից հրապարակվում է զանգվածային լրատվական միջոցներում, Նախարարության պաշտոնական կայքէջում, սոցիալական կայքերում: